

## ՎԱՏԻԿԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ԿԱՄ ՍՈՒԼԹԱՆՉԱՀ ԱՄԻՐՐԵԳԻՏԱՆԸ ՀՆՏՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ՝

Թոքատցին 1566-ին (լատ. տմանց 1567-ին) թողնում է Վենետիկը և իր տպագրական պարագաները հեռու առած դնում է Կ. Պոլիս: Օտմանյան ժայռաքաղաքըն առաջին նվազ չի ժողովում նրան. Արդարին ձերբակալում են ու նետում բանտ: Որքան ժամանակ է մնում նա կալանքի տակ, հայտնի չէ, երևում է ոչ երկար ժամանակ, «անմեղուկ իւնը հաստատելով» իշխանութիւնը արձակում է նրան, որը և առանց դանդաղելու Պոլսում հիմնում է առաջին Հայկական տպարանը (1567)թ.:

Կ. Պոլսում սկսվում է Արդար Ամիրբեկյանի գործունեութան երրորդ, իսկ տպագրական գործում երկրորդ շրջանը: Այստեղ նա «Խորվիրապի Առաքել արեղայի ձեռամբ» տպագրում է հետևյալ 5 գրքերը՝ «Փոքր Բերական կամ Այբբեմարան», «1567 թ. Տոնացոյց», «Ժամագիրք և Պատարագամատոյց» 1568-ին և «Մաշտոց» 1569-ին, Վ. Չարդարյան հիշում է նաև Տաղարան, իսկ Թեոդիկը՝ Պարգառունար, Թերևս անունների շիտթություն, որովհետև Արդարի Կ. Պոլսում տպագրած գրքերի թիվը ամենքի մոտ էլ 5-ից չի անցնում: Մաղաքիս դպիր Ճեփաճիրճյանը իր ժամանակագրութեան մեջ Տոնացոյցի մասին այսպես է գրում.

«Թժժ. ի Կ. Պոլիս նոր ստամբուլայ դիր սահմանեցին... ձեռամբ խորվիրապի Առաքել արեղայի, արհեստագործութեամբ Արդար դպրին և իւր Թագադար Մնատնիոս Սուլթան սարկուսդին, որոյ գրովքն արպեսալ Տոնացոյցս առաջ բերին (յիշատ. 262)»:

Արդարի որդու այստեղ հիշվելը չէր պետք է առիթ, սա կարծելու, որ նա նույն

պես Պոլիս է եկել, որովհետև ինքը Սուլթան Չառչահն իր համար վկայում է, որ հորը մեկնելուց հետո շարունակել է մնալ Հոռմուս: Արդարի Կ. Պոլսում հրատարակած գրքերը տպագրական արվեստի տեսակետից թույլ են իհարկէ, ուրիշ կերպ էլ լինել չէր կարող: Ինչ էլ սր լինի, Արդար Թոքատցին կուլուրական մեծ գործ է կատարել իր ժամանակին հայ տպարանական գործի ասպարիտում և իրենից հետո գրեթէ ամբողջ մի դար նա չի ունեցել իր հետեւորդը Կ. Պոլսում: Երեմիա Չերեպի իր ժամանակագրութեան մեջ պատճառը համարում է «տղիտութեան և նախապաշարման՝ Արդարու և յուր դյուռնին դեմ հանած հալածանքը ու ինչպես եկեղեցական իշխանութեամբ զանիկա խափանելու ջանալը» (Չարդ. 278): Երբ դեռ 1512-13 թվականներում տպագրված գրքերը երևան չէին եկել, Արդարը համարվում էր առաջին հայ տպագրիչը: Վերջին տարիներս արդ պատիվը վերացավ իր վրայից, համեմաքն դեպս մնալով հայ տպագրութեան պատմութեան մեջ մի պայծառ դեմք:

1569-ից հետո այլևս դադարում է Արդարի տպագրական գործունեութունը, ինչպես նաև առհասարակ նրա անվան հիշատակութունը. հաստատապես հայտնի չէ դառնում, թե Թոքատցին Կ. Պոլսից մեկնել է էջմիածին իր պատգամավորութեան և՛ կատարած աշխատանքների մասին դեկուցելու Միքայել կաթողիկոսին, թեկուզ տարիներ անցնելուց հետո:

«Հիշատակարանի» հեղինակը, մեզ հայտնի չէ ինչ աղբյուրներից առնելով, գրում է, որ «Արդար Կ. Պոլսեմ կանցնի էջմիածին (1569-ին) Միքայել կաթողիկոս»

սին քով, ուրկե վերջ ո՛ւր և ի՛նչ ըլլալու մասին սրեկ ծանոթություն կազակի»։ Օրմանյանը, երկվի հիմք ունենալով այս աղբյուրը, հավանական է դռնում, որ Աբ դարը «իր տպարանին կազմվածներով փոխադրված ըլլա էջմիածին», սակայն հարցը թողնում է ենթադրական վիճակի մեջ, քանի որ էջմիածնում այդ ժամանակ տըպագրություն դոյություն ունենալու մասին ոչ մի վկայություն չկա։ «Աղբյուրատու» հեղինակը անտես անելով Արդարի պատգամատրության իսկական, քաղաքական նպատակը, դռնում է, որ «առանց անոր (այսինքն «տպարանին կազմվածներին») դժվար կլլա մեկնել (անոր) էջմիածին երթալուն նպատակը»։ Իսկ քանի որ մեր այս հոդվածի նյութն է կաղմում Աբ դար Ամիրբեդյանին ներկայացնել ոչ որպես տպագրիչ, այլ քաղաքական դործիչ, մենք դառնանք նույն խնդրին, երբ թոքատցին դեռ Հումումն էր տպագրության դործն սկսելուց առաջ։

Վատիկանի դիվանագիտական խաղերը մենք մի քիչ այլ կերպ ենք հասկանում, քան Արգար թոքատցու առաքելության մասին մինչև այժմ գրողները (Չամչյան, Զարր-հանարյան, Լեո, Օրմանյան, Զարդարյան, Թևոդիկ), ուստի թող թույլ տրվի մեզ փորձել բաց անելու թախաղձերը։

Եթե Սեբաստիայի ժողովը և ինքը Միքայել Սեբաստացին իրենց դիմումներով, թեկուզ Հայոց եկեղեցու անկախության կորուստի դնով կամեցել են Պիոս IV-ին սիրելի դառնալ և դրավելով իրենց կողմը «խաչակիրներու արշավանք» կաղմել տալ Արևելքի դեմ, ապա պապը չի հավատացել նրանց երկդիմի թղթին և ցանկացել է Հայոց կաթողիկոսին բերել տալ Հոռոմ, անձամբ ճնշում գործ դնելու նրա վրա և վերջնականապես դուրս բերելու եկեղեցիների միացման հարցը։ Պիոս պապը Սուլթանշահին ոչ թե որդեգրել է իսկապես, այլ պահել է պատանդ, որ Արգարը իր բոլոր աղեղեցությունը գործ դնե Միքայել Սեբաստացուն Հոռոմ բերելու համար։ Ինքը Սուլթանշահը չի թաքցնում, այդ բանը, որ պապը «չի թողել» իրեն հոր հետ վերա-

դառնալու, այլ պահել է իր մտը։ «Եվ զիս ս. փափն որդեգրե աննկով իւրն ոչ Բոռով ընդ հօրն իմ ի պատճառս ի յես չոքելոյ հօր իմո ի Հայոց»։

Նոր հավատացյալներ դրավելու մարմանըով բռնված ճարպիկ դիվանագետ Պիոս IV-ը նույնիսկ հասկացնել է տալիս Արգարին, որ եկեղեցիների միացումը դուրս դալուց հետո նրա «թաղազարմ» որդին՝ Սուլթանշահը, կամ նոր անունով Մարկանտոնը կարող է նույնիսկ թաղալոր դառնալ Հասաստանին, այլապես ի՛նչ է նշանակում «փափն» Փիոս արար համադրամար հանդէպ և առջի խոսուս ամբոխին համբուրեալ դեբեսս Արգարի, առելով թէ ի Հայոց թաղաւորն դաի ոմն մի», կամ «թաղաւորազն է և արժան է սա փաւաց և պաւույց» և կամ «թաղաւորազն եկիր առ իս և աքթ») փառաւորեալ իբրև արքա առաքեմ դեկ առ պատրիարքն, զի բերցես նմա զու մեկ» («Հիշատակարան»)։

Պիոս IV-ը հոգ է տանում և իր «որդեգրի» կրթության մասին։ Մարկանտոնը նախ «զպրատանը», ապա և «հոր կարգի նախերի ձեռաց ներքո» սովորում է լատիներեն և այլ ուսմունք, առատ նվիրատուութուններ է ստանում Վատիկանի դամբարանից և ինքն էլ իր կողմից օրնություն հասցնում Հումում իրեն դիմող «ազգային սնանկներուն և կարոտյալներուն»։ Սակայն, ոչ պապը և ոչ Սուլթանշահը այլևս չեն տեսնում Արգարի երեսը։ Երևում Պիոս IV-ը մեռնում է և նրա տեղ կաթողիկ եկեղեցու քահանայապետության դահը, ինչպես վերելում առացինք, դրավում է «մեծ ինկվիզիտոր» Պիոս V-ը։

Նոր պապի օրով «թաղալորազն» Մարկանտոնի դրությունը ոչ միայն խախտում է Հոռոմում, այլ և դնալով ավելի ամբանում և բարձրանում։ Նրա համար նույնիսկ արտոնյալ վիճակ է ստեղծվում և կոչվում է նաև «հովիթ Հայոց»։ Սակայն այս պապն էլ երկար չի ապրում, 1572-ին նրան հաջորդում է Գրեգոր XIII-ը։

Հոռոմեական եկեղեցու պահակալների այս հաջորդականության ժամանակամիջոցում մեռել էր նաև Հայոց կաթողիկոսը՝

մեզ ձանձօթ Միքայել Սերաստացին (1576) :  
Նրան հաջորդել էին ուրիշները :

Իսկ ինչպիսի՞ք էր նույն այդ պահերին  
Թուրքիայի և Իրանի քաղաքական կացու-  
թյունը, նրանց փոխհարաբերությունը . ի  
վիճակի՞ն էին արդյոք եվրոպական պետու-  
թյունները, եթե նույնիսկ կամենային ու-  
ժի գլխել Արևելքի դեմ մի բան շահելու  
համար :

16-րդ դարի կեսերին Սուլթան փա-  
ռահեղի օրով Օսմանյան կայսրութունը  
գարձել էր այնպիսի հզոր պետութուն, ո-  
րի հետ կցանկանային դաշն կնքել եվրոպա-  
յի պետություններից շատերը : Թուրքիայի  
բանակը սակեկց ավելի զորեղ ուղղման  
ուժով էր ներկայացնում եվրոպայում :  
Թուրքիային էին սրտականում Հունաստա-  
նը, Բուլղարիան, Հունգարիան, Ղրիմը, Մի-  
բիան, Պագեստինը, Միջագետքը, Արարի-  
ան, Հյուսիսային Աֆրիկան-Եգիպտոսի,  
հետ : Սակայն երկար ժամանակ չանցած,  
Սուլթանն ժառանգների Սելիմ II-ի և Մու-  
րադ III-ի գահակալության ժամանակամի-  
ջոցին ներքին և արտաքին մի շարք հան-  
դամանքների պատճառով Օսմանյան պետու-  
թյունը սկսել էր թուլանալ և կորցնել իր  
երբեմնիս փառքն ու քաղաքական հիպոթի-  
կությունը :

Իրանում շահ Թամասը 53 տարի թա-  
ղափորելուց հետո 1576-ին մեռել էր, կամ  
ավելի ճիշտ «ի բողիկոս խեղդիս» էր,  
ինչպես վկայում է Չաքարիա պատմիչը :  
Կարճ ժամանակով նրան հաջորդել էր իր  
որդին Հարաբը, նույն օրն իսկ սպանել  
ապով իր կըրորը՝ Իսմայիլին, սակայն սա-  
կ էլ մի տարի-կես թաղափորելուց հետո  
նույնպես խեղդվում է, իր տեղը ստցով  
Թահմապի ավազ որդի Մահմեդին : Օղովե-  
լով Իրանի այս խառն գրությունից Օսման-  
յան բանակը Լայա փաշայի գլխավորու-  
թյամբ կռվի է դուրս գային և 1578-ին մեծ  
հաղթություններ սանում, գրավելով Հյու-  
սիսային Հայաստանը : Թուրքիային են մի-  
ացվում Արարատյան դաշտը, Էջմիածինն ու  
Երեվանը, որտեղից նույն պատմիչի ասե-  
լով Լայա փաշեն զգրեհաց 60.000 ածխոս :

Այսպիսի խառնաշփոթ ժամանակում

Հարմի պապը և «Թագավորացն» Սուլթան-  
շահը չէին դադարում փաթիլախու «Հա-  
յաստանի փրկության» իրենց դադափարը .  
մի փրկություն, որ եթե նույնիսկ զլու-  
ղար, այդ բանից սակեկց ավելի պիտի շա-  
հեկին ինքը Վատիկանը Հայոց եկեղեցին  
կալ տալով, և Սուլթանշահ Մարկանտոնը՝  
իր փառատիրական ձգտումներին հասած լի-  
նելով :

1570-ականների կեսերից նորից կենդա-  
նություն է ստանում այդ դժբախտ լինդի-  
րը : Վերջուր ԺԳ-ը, դրում է Օրմանյանը,  
բրուն կեղավով կաշխատեք Արևելեցիները  
և մասնավորապես Հայերը հոսմեղապա-  
նության շահելու և ասոր համար սակեկ ան-  
սակ հրապուրել է միջոցները ձեռք առած  
էր : Այդ պահերին՝ 1575-ին Կիլիկիայի  
Հայոց կաթողիկոսը՝ Սաչատուր երաժիշար  
մի զբաղմուր գլխում է անում Գրիգոր XIII  
պապին, խնդրելով աջակցել «Մ. Սիոնի  
փրկության» : Որպես հասուցում այդ ա-  
ջակցության, 80-ամյա Սաչատուրը պապին  
ավանս էր առիս եկեղեցիների միացման  
իր համաձայնությունը :

Կիլիկիա, նոր խնդիր, նոր երկրա-  
մաս : Գրիգոր XIII-ին չէր կարող հայանի  
չբնեկ, որ ուղիղ երկու դար առաջ այնտեղ  
կար հայկալիսմ քաղաքապետը, որ ա-  
վելի վաղ, իր նախորդներից Կեղեստինոս  
և Լեոնիմոսիս պապերը մոտ հարապետու-  
թյան մեջ են եղել հայոց թաղավորներին  
հետ, «բառնեացրել» նրանց ու օգտակար  
դարձրել իրենց խաչակրաց արշավանքների  
համար : Ահա արեմուտքում բողոքականու-  
թյան տարածումով իր թուլացող հեղինա-  
կությունը արեկելում բարձրացնելու հա-  
մար ներկայանում էր մի նոր ստիթ, որը  
պետք էր օգտագործվեր, թեկուզ Վատիկա-  
նի միջոցներն ուժեղացնելու համար : Այդ-  
պես է եղել և անցյալում, ինքը Լուսթերը,  
երբ տեսել է, որ դերմ . իշխանները իրենց  
զուգուղականությամբ հեռեում են պապե-  
րին, հայանել է այսպիսի միաց. «Բնչպես  
որ պապը մինչև այժմ Թուրքերի դեմ պա-  
տերազմի ու կամ մեղքերի թողության պա-  
տրվակով փող էր թաքնում գերմանական  
երկրներից, այնպես էլ իշխանները պապի

օրինակով այժմ ուզում են մեզանից մող կորզել»:

Անցնում է երկու տարի, Կլմիածնից Իտալիա է հասնում Թադևոս կաթողիկոսը, բայց ինչպես է լինում, որ մի քանի ամիս Վենետիկում մնալով, չի գնում Հոռոմ, այլ Լեհաստանի վրայով վերադառնում է Վաղարշապատ: Պատկին այդ բանը դուր չի գալիս. ինչպե՞ս թե, ինքը դիշեր-ցերեկ մտածում է հայոց ազգի հեռու և մարտնի փրկութեան համար, իսկ ամենայն Հայոց կաթողիկոսը դալիս է մինչև Վենետիկ հասնում ու չի բարեհաճում այցելել Հոռոմ ու «ներկայանալ» իրեն:

Եվ ահա Գրիգոր XIII-ը 1583-ին ուժեղացնում է իր գործունեությունը թափուրնա մի կողմից հասուկ պատգամալուրութուն է ուղարկում Կլմիկիա, Սաչատուր կաթողիկոսի հետ տեսնելու և բանակցելու համար, մյուս կողմից իր մոտ է կանչում «Հայոց թագալուրութեան թեկնածու» Սուլթանշահ Ամիրբեդյանին և խոստանում նրան «քաղաքներ և բերդեր», եթե նա շտապ կերպով կարողանա Կլմիածնի կաթողիկոսից բերել առ կարևոր պաշտոնական թըլթեր կնքված և կրկնամով, հաստատված:

Սուլթանշահը Թադևոս կաթողիկոսին նույն թվի նոյեմբեր ամսին դրում է մի ընդարձակ նամակ, որի մեջ աղերսում է ուղարկել իր արքայադարձ լինելը հաստատող մի պաշտոնական վկայագիր, վավերացված կաթողիկոսի և քսան եպիսկոպոսների կնիքներով և մատների հպումով: Նամակը տանելու և ցանկալի վկայականը բերելու համար նշանակվում է հատուկ պատգամալուր, որը լիազորված էր նույնպես, եթե հնար է Հայոց կաթողիկոսին հրալիրելու Հոռոմ: Ամիրբեդյանի գրությունը, որը լուսանկար նմանությամբ տպագրված է Վ. Զարգարյանի Հիշատակարանի մեջ (Ա. 266) խիստ հետաքրքրական է և պարունակում է մի շարք կարևոր տեղեկություններ թե իր և թե իր հոր մասին. մենք այստեղ առաջ կբերենք նամակի մի այն վերջին մասը, որը վերաբերում է բուն խնդրին:

«Եւ ես սոսո սնա ի դարստանս ձե-

սամբ հզար կարտինարաց և ամենայն դըպրութեան Լատինացոց... առաջի վեհ և երևելի Սանթասէվէրինա կարտինարին, որ է առաջիկայ Ս. Փափուն ԺԳ. Գրեգորին, և... և վասն դարոյ նորա Ա Հոռոմ և դետալ սահաւ ի դրանց նորա և զվկայու թիւն որ վկայեսալ էին թէ թագաւորայն... լով զայս ըստուգեաց և յարոնեաց Ս. Փափուն, և վափուն կամեցաւ տալ ինձ Ժառանգութիւն իբր կամ զքաղաքս կամ գրեորս և... լով իբր թէ նոր իմն վկայութիւն խնդրելով ի Հայոցն: Եւ ոչ թէ ինձէն Ժառանգութեան փախաքիմ, այլ ըստ վերգրելոցն որ վասն Հայոց... զայս վասն այս պատճառացս առաքելցի զայս սիրելին իմ և փորձողակիցն իմ առ հոգեւոր Ս. Հայրութիւնը քո զի զայսմանէ լաւն արացես ինձ, զի ձեռամբ քով դրեացես նոմայ վկայութիւն առաջի գրոյն որպէս աստ ընթեւնուա, և կնքեացես զնա կնքաւ քո, և թէ հնար է մինչև քսան Եպիսկոպոսունք կնքելով և ձեռնադիրս անել ի նոմայս զոր հայրը Սուրբ ինձ շնորհէ, և զփախաք իմ ի քէն... ալ կամ իմ այնպէս արացես. Տէրն վկա լիցի այժմ բանիցս, զի ինամս Ս. Փափին ամ յամի անդակաս սրահել հողա...

Ի Ս. Կլմիածնէն և յ... նորա: Եւ դարձեալ թէ ոչ վասն իմ փախաքիմ, այլ վասն Հայոց երկց պատճառաւ նախ զի ամենայն կարտուեսայս որ դան առ իս բնակեցուցիցի դիկեղեցիս Հայոց և բարձրացուցից... ի մէջ աղբիս այս և կացցեն ի յաւանդս իրեանց... որպէս յաւանդական, և մի ոք յաղբիս յայսմանէ... ցուցանէ և մի այլայլէ զնոսա, երբորդ զի յորժամ այս ամենայն լինի հոչակի և ստրածի արարմունք Հայոցն յունկս ամենայնի, կարացից համարձակեցայց հանապազօր յիս և ի մոտս առ Ս. Հայրն Փափն և առ հօր կարտինարքն և դըուշացուցանել... դատալին երդումն և դաշինքն և յօժարեցուցանել զնոսա օր ըստ օրէ դալ նոցա ի փրկութիւն Սրբոյն Սիոնի որպէս հարքն իմով ոչ եղև, մտղթեմ և հայցեմ յԱստուծոյ զի ձեռամբ իմով եղև ցի: Եւ դու, հայր իմ հոգեւոր, Տէր Թադէոս Պատրիարք, յօժարիս որպէս որդոյ հարգատոյ արացես ստուշութեամբ և հան-

ճարիւ և առնթեր նամակին զնելով զինի-  
քըս միահամուռ Եպիսկոպոսացն և զմա-  
տունս իւրեանց ի ներքոյ կնքոյն և խոստո-  
վանաբար... և մի իբրև արակ... և փոյթ  
առ փոյթ կատարեսցես և զարձուցես  
զպատգամաւոր... զի զոյթ հայրութեանդ  
տեսից ծառայք և հողեւոր որդիդ քո զի և  
կղէց անդինաքար ի մէջ Հոռոմայ և ի  
մէջ...: Եւ ետ այսոց կատարելոց թէ մի  
ի սպասաւորաց հօրդ հողեւորի ժամանեցէ  
աստ առ ի ինդիրս ինչ տեսցէ... և քո  
զայտեանդ նայէի զի հարց սուրբ... ի քէն  
խկ վիհայէիւր բերան առ բերան և հաստա-  
տէիւր ձեռամբ քով և ...բաղիւս քով սըր-  
բով... և զեր եւս այսպէս ակն ունիմ, և  
թէ ի ժամանակիս չունի փառաւորութիւնդ  
կամք ժամանելոյ աստ, որպէս եւս ի խըն-  
դիրս է մերոյ Հայոցս Պարոն կարտինարին  
զորոյ զմ... ի զարձ պատասխանուս թըղ-  
աիւ ինձ թէ... պատրաստութիւն առնեմ  
Սրբութեանդ և կամ... քեզ կամ ճանապարհ  
հաւ դարոց ես, զի առաքեցից ամենայն...  
հրաման կարտինարին զի յո՞ր քաղաք հան-  
դիպեցի Սրբութիւնդ քո, ըստ արժան-  
եացն... ի քաղաք, ի թագաւորէ առ թագա-  
ւոր մինչև մոտեան լեցիս մեզ, ապա մի ի  
սպասաւորացդ առաքես, որ ետ ամբոխիւ  
ըստ արժանի ելանել առաջի և զօրինաւորն  
առնեմ զի ծանիցեն, ... թէ մարդկան...

վեհ իմաստութեանդ Հայր իմ հողեւոր Տէր  
Թաթէոս Պատրիարք-Հայոց:  
Գրեցաւ ի թուականութիւն Հայոց մե-  
ծաց ի ՌԼԲ ի Մեծն Հոռոմ ի դուռն զլիսա-  
ւոր Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի ձե-  
ռամբ Հոկտեմբեր ԻԱ օրն շաբաթ օր:

Վերասացեալ  
Մեղաւօր  
ՍՈՒՂԹԱՆՇԱՀ ՄԱՐԳԱՆՏՕՆԷՍ

Սուրբամշակի այս նամակը, որ մինչև  
հիմա էլ իմաստքով պահպնում է Կ. Պոլսում  
Անտոնյան Միաբանության դրաղարանում,  
ինչպէս երևում է կես ճանապարհին է մնա-  
ցել և չի հասել Էջմիածին: Եւ ի մեծ վիշտ  
պատի և «արքայազն» Մարկանտոնի մի քա-  
նի յամիս չանցած մեռնում են թե թաղեսոս  
Բ. Վաղարշապատցին, թե Մաչատուր երա-  
ժեշտ կաթողիկոսը և 1585-ն ինքը «նարին  
արքայութուն» Գրիգորի XIII-ը:

Այս ամենից հետո մենք նորից մի ան-  
գամ չկրկնե՞նք վերևի խոսքը թե՛ «ամենայն  
ինչ վասն չկամելոյ աստուծոյ յունայն և  
անտոի եղև»:

Մնում է Արզար Ամիրբեդյանի համար  
հիշել լատինական հին առածը. «Այսպէս է  
անցնում աշխարհային փառքը»:

Փ. ԼԵՎՈՆՅԱՆ  
(Արվեստի վասակալօր գործիչ)

